զի իւրեանց հացն յայնցանէ է։ Եւ կարծեմ թագաւորին էճէլն ևն. նաև ի թէքիր տաղը եղեալ ժամն ֆրէնկաց տուեալ է փլուցանել։ (Մեղրոնեան առ Հ. Մկրտիչ Ալանեան, 1761 Յունվ. 10. [Ս. Ղազար])։

Միդ.

Իմացայ որ զՀ. Մկրտիչն ի Հռոմ կարգեալ են առ ժամանակ մի ի վերայ հայ ուսանողաց գօլէճի փրոփականտային, և թէ ունի ընդունելութիւն առ մեծամեծս սուրբ ժողովոյն...։ Հրաման ել յայրքայէ երկրիս գրգռմամբ խուլումճի պաշուն թողուլ խուլումճոց զկէտիկ ունողաց՝ զմօլուք. և թողին բազումք գրեթէ ամենեքին։ (Հ. Զաքարիա առ Մեղրոնեան, 1761 Յունվ. 12. [Կ. Պոլիս])։

Միե.

Վասն սառաֆօղլու սարգիս վարդապետին յայտ լիցի, զի յաւուրս յայսոսիկ խօսեցայ ընդ նմա. և նա պատմեաց ինձ, և ասէ, թէ ոչ ևս երթայց ի թօխաթ, այլ ի տեղի իմ դնելոց են զահագին սահակ վարդապետն. և ես այժմ ի խնդիր եմ առնուլ դրամս ի պատրիարգէ վասն ՀԱՍ-ՍՈՒՆ հալածման, և ի մտից աթոռոյ եւդոկիոյ ըստ չափու տարւոյ միոյ. և յուսամ կուտել ընդ ամենայն իբրև զչորս տաղանդս առ այժմ։ (Հ. Իգնատիոս առ Մեղրոնեան, 1761 Յունվ. 19. Կոստանդնուպոլիս)։

Միզ.

Վասն պատերազմաց հաստատեն աստ, թէ ստուգապէս տաճիկն յառնէ ի վերայ Վենետիկեցւոց, ուստի ի բազում տեղեաց լուաք, թէ զվէնէտիկու էլչին ըմբռնեալ եդեալ են ի եէտիղուլէն։ Իսկ զտաւունին աստ սկսան ասել զներհակն գրեցելոց ի գերյարգութենէդ, այսինքն թէ կացուցեալ են զնա ՇԷՆԷռալիսիմօ բացարձակ. այսինքն անկախ ի ճէնկ տիվանիէն վէնայու. և զյովսէփն ընդ երեսուն հազարաց մաճառից յղեն ի պատերազմ. սակայն ի ներքոյ կառավարութեան տաւունին. յորոց յայտ է թէ ամենայն ինչ է անստոյգ։ (Հ. Մկրտիչ առ Մեղրոնեան, 1761 Մարտ 28. [Հռոմ])։

Միէ.

Վասն տօնանմայի քաղաքիս (վասն նորոգ ծնեցելոյ շահ սուլթան դստեր թագաւորի), զուցէ գրեալ են այլք, զի յայս նուագ առաւել եղև քան զառաջինն փառազարդութիւն դրանց ապարանից մեծամեծաց, և տեսեաց զաւուրս եօթն, և տուաւ համարձակութիւն ամենեցուն առհասարակ առնել ուրախութիւն յամենայն տեղիս։ (Հ. Իգնատիոս առ Մեղրոնեան, 1761 մայիսի 19. Կոստանդինուպոլիս)։

Միը.

Ընկալայ զգիր գերյարգելութեանդ. և իմացայ զէութիւն իրաց։ Սակայն ասես թէ թարգմանութիւնն յովսեպոսի ճառից խանգարեալ իցէ. մերքն չունին ժամանակ իբր ի նորոյ թարգմանել զբոլոր գործն։ Մի՛ վասն այսորիկ խորհիցիս հայր պատուական. զի չէ՛ որպէս կարծեսդ. թարգմանութիւնն յուսամ թէ չունի հարկ այնպիսի մեծի սրբագրութեան, զի մեք ասէն՝ որքան է մերս կար՝ յետ ըստ ամենայնի թարգմանելոյն՝ ընդ հայր զաքարիային վերստին սրբագրեցաք։ Եւ եթէ ի տեղիս ոմանս պատահմամբ սխալ ինչ անցեալ իցէ՝ նոյնն յաչաց վրիպմանէ պատահեալ՝